

մէջ , և որովհետեւ ասոնք չէին արձանագրուած , անկարելի է հաշուել անոնց ճշգրիտ թիւը :

Տայր երկինք որ հիւպատոսներու և թղթակիցներու հաշիւները չափազանցուած ըլլային :

Սակայն տրուած ըլլալով Ստանայի կարեւորութիւնը՝ տնտեսական տեսակէտով , տրուած ըլլալով նաև որ ջարդերը տեղի ունեցած են աշխատանքի և առուտուրի ամենէն եռուզեռ շրջանին , Անատուրի զանազան նահանգներէն՝ և նոյն իսկ Մուսուլի նման այնքան հեռավոր նահանգէ մը հասած գործաւորներու ընդհանուր թիւը 40 կամ 50 հազարէն նուազ պէտք չէր ըլլալ : Այս թիւին առնուազն կէսը կազմուած էր Հայերէ՝ որոնց մեծագոյն մասը ջարդուած է :

Զիննի փաշա (դէպքերէն վերջ կարգուած վալի Ստանայի) տեսակցութեան մը միջոցին օր մը կ'ըսէր ինծի թէ՝ անկարելի էր ընդունիլ որ հայ զոհերու թիւը կարենար հասնիլ 15 հազարի , քանի որ պաշտօնական տոմարներու համաձայն , Ստանա քաղաքը 13 հազարէն աւելի Հայ չէր հաշուեր : Սակայն , Նորին Վսեմութիւնը , ինչպէս որ կ'երեւար , մոռցած էր որ , երբ իր գործունէութեան վրայ կը խօսէր , իբր յաջողութիւն կը նկատէր իրենց երկիրը ճամբած ըլլալը 10,000 հայ գործաւորներ՝ որոնք հասած էին ուրիշ վայրերէ և բանակած՝ կայարանին մօտ վրաններու տակ կամ քացօթեայ : Երբոր այս կէտը յիշեցուցի իրեն , Նորին Վսեմութիւնը ստիպուեցաւ լռել : Կրնա՞ր այլ կերպ շարժիլ՝ իր պարծած յաջողութիւնը առանց կասկածի տակ թողելու :

Ենթադրենք որ այս խեղճ մարդոց կէսը զանուելով հոս հոն , քաղաքէն դուրս , առանց զէնքի , կրցած է կեանքը ազատել , անշուշտ միւս կէտը կորսուած է առանց հեռք մը ձգելու որևէ պաշտօնական տոմարի մէջ :